# ՀՀ 2017 Թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Վերջին տարիներին Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը հագեցած է կարևոր իրադարձություններով: 2013 թ. ՀՀ Նախագահի հրամանագրով[1] սկսվեց սահմանադրական բարեփոխումների նոր գործընթաց: 2015 թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեի դրված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծն ընդունվեց[2], և Հայաստանի Հանրապետությունը կիսանախագահական քաղաքական համակարգից պետք է անցում կատարի խորհրդարանական կառավարման: Համաձայն ընդունված փոփոխությունների՝ հանրապետության Նախագահի լիազորությունները խիստ նվազում են՝ հօգուտ Ազգային ժողովի և վարչապետի լիազորությունների ընդլայնման:

Սահմանադրության փոփոխությունները, սակայն, ուժի մեջ են մտնելու փուլ առ փուլ: Մասնավորապես, այն գլուխները, որոնք վերաբերում են սահմանադրական կարգի հիմունքներին, մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին և այլն, ուժի մեջ են մտել «ՀՀ պաշտոնական տեղեկագրում» սահմանադրության փոփոխությունները հրապարակելու հաջորդ օրվանից, Ազգային ժողովին վերաբերող դրույթները՝ 2017-ի խորհրդարանական ընտրությունների կազմակերպման ընթացքում և հետո, իսկ Նախագահին ու կառավարությանը վերաբերող դրույթները կգործեն 2018 թվականի նախագահական ընտրություններից հետո: Այս առումով պետք է նշել, որ ընտրական օրենսգիրքը[3] ևս համապատասխանեցվել է սահմանադրական փոփոխություններին[4] և ուժի մեջ մտել 2016 թվականի հունիսի 1-ից:

---

[1] Տե՛ս ՀՀ Նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին», սեպտեմբերի 4, 2013 թ., ՆՀ-207-Ն // http://www.president.am/hy/decrees/item/947/ (վերջին մուտքը՝ 15.05.2017):

[2] Տե՛ս ՀՀ ԿԸՀ-ի պաշտոնական կայք՝ http://www.elections.am/referendum/election-26015/ (վերջին մուտքը՝ 20.05.2017):

[3] Տե՛ս «ՀՀ ընտրական օրենսգիրք (սահմանադրական օրենք)», (ընդունված է 2016 թվականի մայիսի 25-ին) // http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=105967 (վերջին մուտքը՝ 15.05.2017):

[4] Տե՛ս «ՀՀ Սահմանադրություն», գլուխ 16:

*Գծապատկեր 1*

**Խորհրդարանում մեծամասնական և համամասնական ընտրակարգերով պատգամավորական տեղերի հարաբերակցությունը[5]**




*Աղյուսակ 1*

**Խորհրդարանում մեծամասնական և համամասնական ընտրակարգերով պատգամավորական տեղերի հարաբերակցությունը**

| Ընտրակարգ | 1990* | 1995 | 1999 | 2003 | 2007 | 2012 | 2017 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Համամասնական | 0 | 40 | 56 | 75 | 90 | 90 | 105** |
| Մեծամասնական | 260 | 150 | 75 | 56 | 41 | 41 | 0 |
| **Ընդհանուր** | **260** | **190** | **131** | **131** | **131** | **131** | **105** |

Ոլորտի կարևոր փոփոխություններից են Ազգային ժողովի կազմն ու ընտրության կարգը, որի համաձայն՝ այսուհետ Ազգային ժողովը կազմված է լինելու բացառապես համամասնական ընտրակարգով

[5] Տվյալների աղբյուր են՝ «ՀՀ Սահմանադրական օրենք», 5 հոդված (ընդունվել է 27.03.1995 թ.), «ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 55 հոդվածի 1-ին և 2-րդ կետեր (ընդունվել է 03.07.2002 թ.), «ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 57 հոդվածի 1-ին և 2-րդ կետեր (ընդունվել է 19.05.2005 թ.), «ՀՀ Սահմանադրություն 2015 թ. փոփոխություններով», հոդված 89:

* 1990 թ. օգոստոսի 24-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանել Հայաստանի Հանրապետություն, իսկ գործող տասներկուերորդ գումարման Գերագույն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ // http:// parliament.am/ parliament.php?id=parliament&lang=%20arm (վերջին մուտքը՝ 20.05.2017):

** Եվս 4 մանդատ բաշխվում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջև:

ընտրված առնվազն 101 պատգամավորից[6]: Տեղին է նշել, որ անկախությունից ի վեր խորհրդարանական ընտրությունների ընթացքում գրեթե յուրաքանչյուր անգամ փոխվել է մեծամասնական և համամասնական ընտրակարգերով ընտրված պատգամավորների թվի հարաբերակցությունը՝ հօգուտ վերջինիս (տե՛ս գծապատկեր 1, աղյուսակ 1): Ըստ նոր օրենսգրքի՝ Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են բացառապես համամասնական ընտրակարգով, իսկ նախորդ 41 ընտրատարածքների փոխարեն ստեղծվում է 13 ընտրական տարածք՝ 4-ը Երևանում, 9-ը մարզերում:

Ընտրական օրենսգրքի մի շարք նոր դրույթներ միտված են նպաստելու կուսակցական համակարգի կայացմանը: Այսպես, օրինակ՝ յուրաքանչյուր ընտրատարածքում կուսակցությունները կամ դաշինքները պարտավոր են առաջադրել առնվազն 5 թեկնածու, իսկ համապետական ընտրական ցուցակի առաջին մասում պետք է ընդգրկվի ոչ պակաս, քան 80, և ոչ ավելի, քան 300 թեկնածու: Վերջին պահանջը գործնականում նվազեցնում կամ բացառում է մարդ-կուսակցությունների մասնակցությունն ընտրություններին:

Վերը նշվածից բացի՝ համապետական ընտրական ցուցակները կարող են ունենալ երկրորդ մաս՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, որոնց համար նախատեսված է պատգամավորական 4 մանդատ՝ առավել մեծ թվով բնակչություն ունեցող չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Դրա շնորհիվ քաղաքական ինստիտուտները կսկսեն առավել սերտ համագործակցել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ: Այս առումով նշենք, որ ըստ «ՀՀ 2011 թվականի մարդահամարի արդյունքների»՝ Հայաստանում մշտական առավել մեծ թվով բնակչություն ունեցող ազգային փոքրամասնություններն են եզդիները (35308), ռուսները (11911), ասորիները (2769) և քրդերը (2162), որոնց ընդհանուր թիվը կազմում է ՀՀ բնակչության 1,73 %-ը[7]:

Օրենսգրքում մանդատների բաշխման նոր կարգն այնպես է կազմված, որ խորհրդարանում ներկայացված լինեն առնվազն 3 քաղաքական ուժ, իսկ դրանցից մեկն անպայման մեծամասնություն ունենա[8]:

Փոփոխություններ են կատարվել նաև քաղաքական և սոցիալ-տնտեսական կառավարման ոլորտներում կանանց ներկայացվածութ-

---

[6] Տե՛ս «ՀՀ Սահմանադրություն», հոդված 89:

[7] ՀՀ 2011 թվականի մարդահամարի արդյունքներ, ՀՀ ԱՎԾ, Եր., 2013, էջ 272 // http://armstat.am/am/?nid=517 (վերջին մուտքը՝ 19.05.2017):

[8] Ավելի մանրամասն տե՛ս «ՀՀ ընտրական օրենսգիրք (սահմանադրական օրենք)», (ընդունված է 2016 թվականի մայիսի 25-ին), բաժին 4:

յան տեսանկյունից: Ընտրական նոր օրենսգիրքը, ամրագրելով յուրաքանչյուր սեռի պարտադիր ներկայացվածության դրույթը ՀՀ ԱԺ, Երևանի, Գյումրու ու Վանաձորի ավագանու ընտրություններին՝ սահմանում է 75 %[9], իսկ 2022 թվականից հետո՝ 70 % չգերազանցելու պարտադիր պայմանը նախկին 80 %-ի դիմաց[10]:

Քվեարկության կարգի վերաբերյալ նորամուծություններից է ընտրողների գրանցումը էլեկտրոնային համակարգով՝ հատուկ ծրագրի ապահովմամբ: Այն կոչված է բացառելու միևնույն անձի կրկնակի քվեարկելու հնարավորությունը:

Հայաստանն անկախությունից ի վեր ունեցել է Ազգային ժողովի գումարման վեց ընտրություն՝ 1995, 1999, 2003, 2007, 2012 և 2017 թթ.: Վերջին՝ 2017 թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցության հայտ են ներկայացրել քաղաքական 9 ուժ՝ 4 դաշինք[11] և 5 կուսակցություն[12], որոնցից միայն 4-ը կարողացավ հաղթահարել սահմանված արգելապատնեշը (տե՛ս աղյուսակ 2):

Դիտարկելով ՀՀ ԱԺ վեց գումարման ընտրությունների մասնակցության տվյալները՝ կարող ենք փաստել, որ այդ ընթացքում մասնակից քաղաքական ուժերից միայն ՀՅԴ-ն և ՀՀԿ-ն են հաղթահարել օրենքով սահմանված արգելապատնեշը: Կուսակցությունների և դաշինքների մեծ մասն առավելագույնն ընտրվել է երկու անգամ: Այս համատեքստում՝ որոշ չափով առանձնանում է ԲՀԿ-ն, որն ԱԺ վերջին երեք ընտրություններին ունեցել է կայուն մասնակցություն՝ անընդմեջ ընտրվելով: Հիմք ընդունելով դա՝ կարող ենք խոսել առնվազն 3 կայացած քաղաքական ուժի մասին, որոնցից ոչ մեկը, սակայն, արմատական ընդդիմություն չէ, ավելին՝ իրենց կուսակցական պատմության մեջ հիմնականում ընդգրկված են եղել իշխանական կոալիցիաներում: Այսինքն՝ ընդդիմության ինստիտուտը Հայաստանում դեռ կայացած չէ և գործում է միայն անհատների մակարդակով:

---

[9] Մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրությունների ժամանակ կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի համապետական ընտրական ցուցակի առաջին մասում 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով քառյակներում (1-4, 1-8, 1-12 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 75 տոկոսը, իսկ ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) տարածքային ընտրական ցուցակում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 75 տոկոսը:

[10] Տե՛ս «ՀՀ ընտրական օրենսգիրք ..., հոդված 83, 4-րդ և 10-րդ կետեր, հոդված 130, 2-րդ կետ, հոդված 144, 14-րդ կետ:

[11] «Ծառուկյան», «Ելք», «Օհանյան-Ռաֆֆի-Օսկանյան», «ՀԱԿ-ՀԺԿ» դաշինքներ:

[12] ՀՀԿ, ՀԿԿ, ՀՅԴ, «Ազատ դեմոկրատներ», «Հայկական վերածնունդ» կուսակցություններ:

*Աղյուսակ 2*

**ՀՀ Ազգային ժողովում կուսակցությունների պատգամավորական տեղերի հարաբերակցությունը[13]**

| Կուսակցություններ, դաշինքներ, մասնակիցներ | ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1995 | | 1999 | | 2003 | | 2007 | | 2012 | | 2017 |
| | Մ | Հ | Մ | Հ | Մ | Հ | Մ | Հ | Մ | Հ | Հ |
| «Հանրապետություն» դաշինք[I] | 68 | 20 | - | - | - | - | - | - | - | - | - |
| Շամիրամ | - | 8 | - | - | - | - | - | - | - | - | - |
| ՀԿԿ | 4 | 6 | 2 | 8 | - | - | - | - | - | - | - |
| ԱԺՄ | 2 | 3 | 2 | 4 | - | Դ | - | - | - | - | - |
| ԱԻՄ | - | 3 | - | - | - | - | - | - | - | - | - |
| ՀՌԱԿ | 1 | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| ՀՅԴ | 1 | - | 3 | 5 | - | 11 | - | 16 | 1 | 5 | 7 |
| «Միասնություն» դաշինք[II] | - | - | 33 | 29 | - | - | - | - | - | - | - |
| Օրինաց երկիր | - | - | 2 | 4 | 7 | 12 | 2 | 8 | 1 | 5 | - |
| «Իրավունք և միաբանություն» դաշինք[III] | - | - | 1 | 6 | - | - | - | - | - | - | - |
| ՀՀԿ | - | Դ | - | Դ | 10 | 23 | 22 | 41 | 29 | 40 | 58* |
| «Արդարություն» դաշինք[IV] | - | - | - | - | 1 | 14 | - | - | - | - | - |
| Ազգային միաբանություն | - | - | - | Դ | - | 9 | - | - | - | - | - |
| ՄԱԿ | - | - | - | - | - | 6 | - | - | - | - | - |
| Համահայկ. աշխատավորական կուսակցություն | - | - | - | - | 1 | - | - | - | - | - | - |
| Դաշինք կուսակցություն | - | - | - | - | - | - | 1 | - | - | - | - |
| ԲՀԿ | - | - | - | - | - | - | 7 | 18 | 9 | 28 | Դ |
| Ժառանգություն | - | - | - | - | - | - | - | 7 | - | 5 | - |
| ՀԱԿ | - | - | - | - | - | - | - | - | - | 7 | - |
| «Ծառուկյան» դաշինք[V] | - | - | - | - | - | - | - | - | - | - | 31** |
| «Ելք» դաշինք[VI] | - | - | - | - | - | - | - | - | - | - | 9 |
| Թափուր տեղեր | 2 | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Անկուսակցականներ | 72 | - | 32 | - | 37 | - | 9 | - | 1 | - | - |
| **Ընդամենը** | **150** | **40** | **75** | **56** | **56** | **75** | **41** | **90** | **41** | **90** | **105** |

[13] Տվյալների աղբյուրը տե՛ս **Nohlen D., Grotz F. and Hartmann C.** (eds) (2001), Elections in Asia & the Pacific: A Data Handbook, Vol. 1, London, Oxford University Press, ՀՀ ԿԸՀ պաշտոնական կայք http://www.elections.am/electionsview/, ԵԱՀԿ-ի վերջնական հաշվետվությունները ՀՀ ընտրությունների վերաբերյալ // http://www.osce.org/odihr/elections/armenia (վերջին մուտքը՝ 20.05.2017):

[I] «Հանրապետություն» դաշինքում ընդգրկվել են հետևյալ կուսակցությունները՝ ՀՀՇ, ՀՀԿ, ՀՌԱԿ, ՀՔԴՄ, ՍԴՀԿ, «Մտավորական Հայաստան»:

Ընդդիմության խնդիրներից է նաև այն, որ դրա ներկայացուցիչներն ընտրություններին նախընտրում են հանդես գալ առանձին-առանձին, և չկա մի ուժ, որը կկարողանար միավորել ընդդիմադիր բոլոր կուսակցություններին: Մինչդեռ դրա հնարավորությունն առկա է, իսկ մի շարք վերլուծություններ վկայում են, որ ընդդիմության միավորվելու պարագայում ընտրազանգվածի շոշափելի կորուստ չի լինի, ավելին՝ այն կուսակցությունների ձայները, որոնք կորչում են սահմանված նվազագույն շեմը չհաղթահարելու պարագայում, կվերածվեն պատգամավորական մանդատների՝ մեծացնելով ընդդիմության ներկայուցչությունը խորհրդարանում:

Նման եզրակացության ենք հանգում նաև ՀՀ 2017 թ. խորհրդարանական ընտրությունների կոռելյացիոն վերլուծություն[14] իրականացնելիս. կուսակցությունների կոռելյացիոն գործակիցն ընդունվել է որպես դրանց ընտրազանգվածների քաղաքական նախապատվությունների ընդհանրության վիճակագրական չափ: Այսինքն՝ երկու կուսակցությունների միջև կոռելյացիոն դրական բարձր գործակիցը վկայում է դրանց ընտրազանգվածների ընդհանրության և, ըստ այդմ՝ ձայների փոխանակման հավանականության մասին: Եվ հակառակը՝ կոռելյացիայի բացասական գործակիցը մատնանշում է դիտարկվող կուսակցությունների և դրանց ընտրազանգվածների՝ միմյանց նկատմամբ մերժողական տրամադրվածության մասին:

---

Դ - ընտրություններին մասնակցել է դաշինքով:

II «Միասնություն» դաշինքում ընդգրկվել են հետյալ կուսակցությունները՝ ՀՀԿ և ՀԺԿ:

III«Իրավունք և միաբանություն» դաշինքում ընդգրկվել են հետյալ կուսակցությունները՝ «Ազգային միաբանություն», ՍԻՄ:

*Այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների 3 ներկայացուցիչ՝ եզդի, ասորի, քուրդ:

IV«Արդարություն» դաշինքում ընդգրկվել են հետևյալ կուսակցությունները՝ ՀԺԿ, ԱԺՄ, ՍԻՄ, ՀԴԿ, ԱԺԴԿ, ԱԺԿ, «Հանրապետություն»:

V «Ծառուկյան» դաշինքում ընդգրկվել են ԲՀԿ-ն, «Ալյանս» և «Առաքելություն» կուսակցությունները:

** Այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների 1 ներկայացուցիչ՝ ռուս:

VI «Ելք» դաշինքում ընդգրկվել են «Լուսավոր Հայաստան», «Հանրապետություն» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները:

[14] Կոռելյացիոն վերլուծությամբ չափվում է երկու փոփոխականների կապի սերտությունը: Այն գնահատվում է -1-ից մինչև +1-ը ընկած միջակայքում (-1≤ Rxy ≤1): Որքան գործակցի արժեքը մոտ է |1|-ի, այդքան կապն ավելի սերտ է: Եթե R=0, ապա կապն ընդհանրապես բացակայում է: Կոռելյացիոն վերլուծության մասին ավելի մանրամասն տե ս **Евстифеев Р. В.** Моделирование электорального пространства российских регионов на основе показателей корреляционной близости политических альтернатив // Моделирование в социально политической сфере, 2007, № 1, **Ա. Ալեքսանյան,** Վիճակագրական մեթոդների կիրառման հնարավորությունները քաղաքական իրավիճակների վերլուծություններում // «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 2009, № 1, էջ 29-34:

*Աղյուսակ 3*

**ՀՀ ԱԺ 2017 թ. ընտրություններին մասնակցած կուսակցությունների կապի գնահատումը կոռելյացիոն գործակցի* միջոցով[15]**

| | «Ելք» դաշինք | ԱԴԿ | ՀՎԿ | «Ծառուկ-յան» դաշինք | «Կոնգրես-ՀԺԿ» դաշինք | ՀՀԿ | ՀԿԿ | «ՕՐՕ» դաշինք | ՀՅԴ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Ելք» դաշինք | 1 | | | | | | | | |
| ԱԴԿ | 0,503** | 1 | | | | | | | |
| ՀՎԿ | 0,105** | 0,147** | 1 | | | | | | |
| «Ծառուկյան» դաշինք | 0,165** | 0,132** | 0,165** | 1 | | | | | |
| «Կոնգրես-ՀԺԿ» դաշինք | 0,521** | 0,380** | 0,087** | 0,148** | 1 | | | | |
| ՀՀԿ | 0,365** | 0,257** | 0,147** | 0,213** | 0,252** | 1 | | | |
| ՀԿԿ | 0,669** | 0,495** | 0,140** | 0,252** | 0,481** | 0,369** | 1 | | |
| «ՕՐՕ» դաշինք | 0,184** | 0,217** | 0,097** | 0,164** | 0,172** | 0,132** | 0,250** | 1 | |
| ՀՅԴ | 0,082** | 0,196** | 0,182** | 0,158** | 0,134** | 0,105** | 0,140** | 0,093** | 1 |

Ստացված տվյալների համաձայն՝«ԵԼՔ» դաշինքը ԱԴԿ-ի և «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքի հետ ունի նկատելի դրական կապ (0,5): Սա նշանակում է, որ խորհրդարանական ընտրություններին նշված ուժերը կարող էին հանդես գալ միասին, ընդ որում՝ համախմբվելով «ԵԼՔ» դաշինքի շուրջ, քանի որ ԱԴԿ-ի և «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքի կոռելյացիոն գործակիցն ավելի փոքր է, քան Ելք-ի հետ: Հատկանշական է, որ «Ելք» դաշինքի ամենաուժեղ կապը ՀԿԿ-ի հետ է (0,67): Այսինքն՝ չնայած գաղափարական տարբերություններին՝ նրանց ընտրազանգվածներն ունեն ընդհանուր նախապատվություններ, և համագործակցությունն այս երկու ուժերի միջև, ինչպես նաև այլ ընդդիմադիր կուսակցությունների հետ ևս չի կարելի բացառել: ՀՅԴ-ն և «Ծառուկյան» դաշինքն ունեն թույլ կապ մնացած բոլոր մասնակից ուժերի հետ, ինչը վկայում է նրանց քիչ թե շատ կայուն ընտրազանգված ունենալու մասին: «ՕՐՕ» դաշինքը նույնպես ունի թույլ կոռելյացիոն գործակիցներ այլ կուսակցությունների և դաշինքների հետ, սակայն, որպես նորաստեղծ ուժ, չենք կարող խոսել նրա կայուն ընտրազանգվածի մասին, առավել ևս, որ այն կազմել է ցածր տոկոս:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ, ի տարբերություն նախորդ ընտրությունների կոռելյացիոն վերլուծության ար-

---

* Կոռելյացիոն գործակցի արժեքների մեկնաբանությունը հետևյալն է՝ մինչև |±0,3|՝ թույլ կապ, |±0,3| - |±0,5|՝ միջին, |±0,5| - |±0,7|՝ նկատելի և |±0,7| - |±1|՝ ուժեղ կոռելյացիոն կապ:

[15] Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները ՀՀ 2017 թ. ԱԺ ընտրությունների արդյունքների վերաբերյալ ԿԸՀ-ի տվյալների հիման վրա՝ ըստ 2009 ընտրատեղամասի // http://www.elections.am/parliamentary/ (վերջին մուտքը՝ 25.05.2017):

** Կոռելյացիան նշանակալից է 0,01 մակարդակում:

դյունքների[16], որտեղ ընդդիմադիր և իշխանական կուսակցությունների միջև գրանցվել էր նկատելի բացասական կապ, 2017 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ կուսակցությունների՝ մասնավորապես ընդդիմադիր և իշխանական, ընտրազանգվածները միմյանց նկատմամբ չեն ունեցել այդչափ բացասական և անհանդուրժողական վերաբերմունք, ինչով և բացատրվում է հետընտրական գործընթացների խաղաղ ընթացքը:

Միևնույն ժամանակ, կուսակցությունների տարածքային ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորի թեկնածուների կոռելյացիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ ամենաշատ բացասական կապը հաստատվել է ՀՀԿ-ի թեկնածուների միջև: Այսինքն՝ ՀՀԿ-ի տարածքային ընտրական ցուցակներով հանդես եկող թեկնածուների ընտազանգվածները հաճախ բացասաբար էին տրամադրված միմյանց նկատմամբ՝ հիմնականում ձայնը տալով հենց թեկնածուին և ոչ թե կուսակցությանը:

Այսպիսով՝ սահմանադրական փոփոխությունները, որոնք պետք է ապահովեն Հայաստանի աստիճաբար անցումը խորհրդարանական քաղաքական համակարգի, առավել նպաստավոր պայմաններ են ստեղծում կուսակցական համակարգի զարգացման և կայացման համար, քանի որ պառլամենտարիզմը, խթանելով բազմակուսակցականության զարգացումը, բարձրացնում է կուսակցությունների դերակատարությունը պետականաշինության գործընթացում: Նոր ընտրական օրենսգիրքի մի շարք դրույթներ քաղաքական դաշտից աստիճանաբար դուրս են մղելու միայն ընտրություններին ակտիվացող փոքր, կեղծ կուսակցություններին, ինչպես նաև մարդ-կուսակցություններին, խթանելու են դաշինքների ստեղծումն ու համագործակցությունը: Սակայն կառավարման նոր մոդելի արդյունավետությունը մեծապես կախված է քաղաքականության սուբյեկտների և հասարակության քաղաքական մշակույթի մակարդակից, ինչպես նաև կառուցողական և միասնական ընդդիմությունից:

**Բանալի բառեր** - *խորհրդարանական ընտրություններ, կոռելյացիոն վերլուծություն, կուսակցություններ, քաղաքական համակարգ, կուսակցական համակարգ, սահմանադրական բարեփոխումներ, ընտրական օրենսգիրք*

**АРУСЯК АЛЕКСАНЯН** – ***Парламентские выборы в Армении: сравнительный анализ.*** – Исследование партийной системы в Армении и роли политических партий в условиях развития парламентаризма приобретает особую актуальность. Политические партии, представляя интересы социальных групп и граждан, являются важнейшим звеном политической системы общества. В статье рассмотрены последние изменения, касающиеся избирательной системы и состава

[16] Այդ մասին տե՛ս **Ա. Ալեքսանյան**, ՀՀ ԱԺ 2007 թ. և 2012 թ. ընտրությունների համեմատական կոռելյացիոն վերլուծություն // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2015, № 3, էջ 60-66:

Национального собрания. Посредством корреляционного анализа изучаются особенности политических партий в стране. На основе данных о парламентских выборах 2017 г. проведён сравнительный анализ сходства и различий партийных электоратов.

**Ключевые слова:** *парламентские выборы, корреляционный анализ, политическая система, партийная система, конституционные реформы, Избирательный кодекс*

**ARUSYAK ALEKSANYAN – *Elections to the National Assembly of RA in 2017: Comparative Analysis*. –** The study of the problem of party system formation and of the political parties' role under the conditions of the development of parliamentarism in Armenia has significant meaning. Political parties, representing the interests of social groups and citizens, are the most important linkage in the political system of society. In the article, the latest changes to the Electoral Code, regarding the electoral system and the composition of the National Assembly of the Republic of Armenia are presented. The author studies the aspects of political parties of Armenia through the correlation analysis. Based on the data of the elections to the National Assembly of Armenia in 2017, the differences and similarities of the party electorates are analyzed, and a comparative analysis is given.

**Key words:** *parliamentary elections, correlation analysis, political parties, political system, party system, constitutional reforms, Electoral Code*